ապա նոյն կողմից միանում է Զումուշատրա, Մացկվալտա, Կարապետի *եւ* Լամաճաուրի *առուակները, որոնք իջնում են* Շաւշէտի *լեռներից: Այս հովտումն են* Պապոլվիլէրի, Ոլադաուրա, Կվիախիձէ, Դգվաշ, Իրեմաձէ, Լալամբերդի, Կիձիճաձէ, Գունդաուրի, Ջաբնիձէ *եւ* Օֆրոպիլաուրի *գեղերը: Նոյնպէս* Շաւշէտի *լ–ից իջնում է* Տբետ *առուակը, որ ոռոգում է* Գոգաձէ, Տբետ, Ցուբլաձա, Մոշնեբի, Սամուլետի, Ցիճարիձէ *եւ* Լակլակիձէ *գեղերը, որոնք բոլորն էլ ոռոգում են համանուն առուներով:*

Ա.Ջաբա վտակը Գորխանաուլի գեղից *հիւս–արեւմուտք ուղղութեամբ՝ հասնում է* Ախալդաբա *գեղը ընդունելով ա.ջից* Զուան *առուակը, որ իջնում է հիւսիսից–հարաւ* Թագիճաուրի *լ–ից: Զուան առուակը ոռոգում է Վ. եւ Ս.* Նագվարէբի, Պօտաբօ, Ադագօլիա, Ինձկվերիդի, Ցկլիս–Սագարի, Սատափլիա, Ջանմուրի, Բրելի, Լոմաճաուրի, Խաբիլաշվիլէբի, Ցեկվա, Ցխիմլեսի, Վարջանաուլի, Վան, Ճալա, Գումարդաուլի, Բարատաուլի, Ցիճտարիձէ, Դիցչվան, Ջիրկվաձէ, Ցխորոտա *եւ* Տակիձէ *գեղերը, որոց ամէն մինի մօտից անցնում է համանուն առուակը, ոռոգելով եայլաները, մացրանները, ախոռները, կշլակները եւ աւերակները: Ախալդաբայից մինչեւ Ղեղա առանը արեւմտահարաւ է ուղղում*